

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏՈՒՄ

Սույն թվականի օգոստոսի 1-ի առավոտյան ժամը 10-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ մեծահարգ տիար Պյոտր Միլովիչ Դեմիչևը Կրեմլում ընդունեց Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետին:

Բարեկամական զրույցի ընթացքում շոշափվեցին մեր ժողովրդին և Հայ Եկեղեցուն հուզող հարցեր կապված աշխարհի խաղաղության, ժողովուրդների բարեկամության, մեր երկրում ծավալվող վերակառուցման ընթացքի, ինչպես և մի շարք հայ եկեղեցիներ ու վանքեր վերաբացելու գործին՝ Հայաստանում, եղբայրական հանրապետություններում և Լեռնային Ղարաբաղում:

Ունկնդրության վերջում Վեհափառ Հայրապետը տիար Դեմիչևին հանձնեց երկու հուշագրեր՝ ուղղյալ Սովետական Միության առաջին ղեկավար մեծահարգ Միխայիլ Սերգեևիչ Գորբաչովին, վերոհիշյալ հարցերի առնչությամբ: Ունկնդրությունը տևեց մեկ ժամ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
14 սեպտեմբեր 1988 թ.